## 180. Խաչքարի վրա Սակածորում կամ Սեմորդյաց ձորում

***Հ ՈԻԷ Մ 1178***

Հրատարակված է՝ Դրիմ 50

***Ի Ո թուին, ես տէր Յովանէս անկեցի զայս անյարկս մեծաւ աշխատութեամբ։***

Ծանոթություն.— *Հավանաբար արձանագրության թվականը Դրիմ սխալ է արտագրել, նա տասնավորի և միավորի գրերը մոռացել է վերցնել։ Այդ բանը պարզ երևում է նրանից, որ նույն խաչքարի վրա կա մի այլ արձանագրություն, ուր խաչքարի կանգնեցմանն է վերաբերում, կրում է ՈԻԷ (1178) թվականը։ Դրանից հետևում է, որ այս արձանագրությունը պետք է ունենա 1178 թվականը (տես արձ. 181)։*

## 181. Նույն խաչքարի վրա

***Հ ՈԻԷ Մ 1178***

Հրատարակված է՝ Դրիմ 50

***Եւ Ի ՈԻԷ թուին, ես Գրիգոր վարդապետ քուերորդի պատրոնացն՝ նոր շինեցի զայգիս եւ կանգնեցի զխաչս յառաջնորդութեան հայր Յովանիսի՝ փասն յիշատակի նորա և ինձ։ Որք երկրպագէք յիշեցէք ի Քս Յս։***

***Եթէ ոք յետ մեր զայգիս հանէ յԱծածնէն՝ նզոված է յԱստուծոյ եւ ի խաչէս։***

## 182. Ջորի մեջ, խաչքարի վրա

***Հ ՈԴ Մ 1241***

Հրատարակված է՝ Դրիմ 59

***Կամաւն Այ հաւր և որդոյ և սբ հոգոյն. Ես՝ հայր Յովանէս, առաջնորդ սբ ուխտին Սանահնայ. թուին ՈԴ գնեցի զայգիս զՍագունենց Խալիլցն վասն արեւշատութեան պարոնացն մերոց։ Ով խափանե, Յուդայի, սատանայի, Կայենի մասնակից է։ Յերեք սբ ժողովոյն նզոված է։***

## 183. Նույն խաչքարի պատվանդանի վրա

***Հ ՈԴ Մ 1241***

Հրատարակված է՝ Դրիմ 59

***Եւ ես՝ Քերուբս տուի զայս զիմ գնուած այգին ի սուրբ Սարգիսն վախմ, որ կուսանքն վայելեն։ Ով որ յետ ու առաջ հանել ջանայ, նզովի յԱյ և յամենայն սրբոց։ Ած ողորմի իմ ծնողացն։***